

7364



1924

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Կ. Կ. Կ. Կ. Ա.ԳԻՏ-ԲԱԺՆԻ

ԳՐԱԴԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՁԵՎԵՐ

Փ. Կ. Կ. 43-րդ
ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ

ԿՊՀ
Հ-11

ՅԵՐԵՎԱՆ
Տեսաբի Օռուշի և սպառագի

1921

17.09.2013

7364

ՀԿԴՀ

Հ-11

մե


23 SEP 2009

1 DEC 2009

Պըոլետարքներ բոլոր յերկրների, միացեք

ԲԱՆԱՁԵՎԵՐ
Ո. Կ. Կ. 13-րդ
ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ

ԴԱԿԵՏ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԵ

ԲԱՆԱԶԵՎ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Ընդունված միաձայն Ռ. կ. կ. 13-րդ
կոնֆերենցիայում)

Անցողական ժամանակաշրջանի տվյալի որյեկտիվ հակառակությունները, զոր բզիսում են տնտեսական ամենատարբեր ձեվերի միաժամանակ գոյությունից, չուկայական հարաբերությունների առկայությունից, այն հանգամանքից, զոր պետական հաստատություններն անհրաժեշտորեն պետք է կիրառեն զործնական աշխատանքի կապիտալիստական ձեվերն ու մեթոդները և զոր անհրաժեշտ է հենվել այդ աշխատանքում պրոլետարիատին տակավին ստար աշխատավորների վրա, և այն, — այդ որյեկտիվ հակառակություններն ազդում են մի շարք բաշասական հակումների վրա, զորոնց գեմ ուղղված պայքարը պետք է դրվի որակարգի մեջ։ Այդորինակ հակումների թվումն են. կուսակցության անդամների նյութական զրության խիստ տարբերությունը՝ նրանց ֆունկցիաների տարբերության հետ զուգընթաց և այսպիս տամ «ավելորդությունները», բուրժուական տարբերի հետ ունեցած կապի աճումը և այդ վերջինների գաղափարական աղղեցությունը, տևաշրջանի վարչական սեղմումը, զոր պետք և տարբերել անհրաժեշտ մասնադիտացումից և այդ հոգի վրա ծագող՝ աշխատանքի զանազան ձյուղի կոմունիստների միջել յեղած կապի թուրացումը, սոցիալիստական շինարարության իր ամբողջությումը և համաշխարհային հեղափոխության հեռանկարները կորցնելու վտանգը, տնտեսական նոր քաղաքականության բացասական աղղեցության յերկյուղն աշխատավորների այն մասի վրա, զորոնք ըստ իրանց զրությունների վարչական անհամեմատ մոտիկից են շփում բուրժուական միջավայրի հետ, կուսակցական ապարատների բյուրոկրատիզմը և զրանից ծագող այն սպառալիքը, թե կուսակցությունը կարող է կտրվել մասսաներից։

ՅԵՐԵՎԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԱՊԱՐԱՆ

1924

Գաղտնաբառ № 1620

1. ԿՈԽՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Պրոլետարական մասսաների վստահությունը դեպի կուսակցությունն աճել է: Դա յերեկում և խորհուրդների ընտրություններից, մենշևիկների և եսկրների կուսակցությունների քայլումից և անկուսակցական բանվորների շարքեր կազմակերպվելուց, վորոնք ակտիվ աջակցում են կուսակցությանը: Միյնվնույն ժամանակ գործոն բանվոր-կոմունիստները, վորոնք բնականաբար կապ պիտի դառնան կուսակցության և անկուսակցական մասսայի միջներ, համարյա ամբողջովին կլանվաւմ են վարչական ու տնտեսական աշխատանքով և այդպիսով անխուսափելիորեն կտրվում են արտադրությունից: Այդ պատճառով տվյալ ըրջանում հիմնական մի խնդիր է կուսակցության համար՝ գործարանային բանվորներից անդամ ընդունելու հարցը: Կուսակցական կազմակերպությունների անելիքն այն է, վոր հենց այդ աշխատավորներին առանձին ուշադրություն նվիրեն, անեն ինչ վոր հնարավոր է, վորպեսզի նրանց չկտրեն արտադրական աշխատանքից, ոգնեն նրանց բարձրացնելու կուտուրական մակարդակը և ամեն հնարավություն տան նրանց՝ իրապես մասնակցելու կուսակցության բոլոր գործերին: Կուսակցության պրոլետար շարքերն ավելացնելու աշխատանքը մոտ ապագայում պետք և դառնա բոլոր կուսակցական կազմակերպությունների ամենահիմնական խնդիրներից մեկը: Առանձին կազմակերպությունների նախաձեռնությունը, վորոնք արդեն սկսել են ծավալել իրանց աշխատանքն այդ ուղղությամբ, պետք և աջակցություն գտնի մեր կուսակցության բոլոր արդյունաբերական մարմինների կողմից: Կուսակցությունը պետք և դյուրություն տա արդյունաբերական բանվորներին՝ խմբերով մտնելու կուսակցական կազմակերպությունների մեջ և թեկնածությունից անցնելու անդամության: Հավասարապես անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել պրոլետարական յերիտասարդության մեջ աշխատելու վրա:

Դյուրացիության մեջ, ուր նորից ստեղծվում են մշակ և կիսամշակ խավեր, անհրաժեշտ և ամեն կերպ բարելավել գյուղացիական բջիջների վորակը, նրանց աշխատանքը գարձնել դեպի կուտուրական ու քաղաքական գործունեյության հունը, մասնավորապես ուժեղացնել նրանց աշխատանքը հողագործական գիտելիքներ ձեռք բերելու մեջ, կոռուպտական գյուղա-

տնտեսական վարկ կազմակերպելու շրջանում, և այլն: Հնդումին, անհրաժեշտ և ամեն կերպ աջակցել գյուղական չունեվոր խավերին և մասնակից անել մշակ տարբերին, ինչպես մեր կուսակցական կազմակերպություններին, այնպես և հողի ու անտառի աշխատավորների համառուսական մինչթյանը:

Մինչեւ Գերմանիայում միջին խավերն աղքատանում են, մեզ մոտ ինտելիգենցիայի մեջ, ինչպես ընդհանուր պատճառների, այնպես ել նրա դրության բարելավման հետ զուգընթաց, նկատվում է ընդհանուր թեքումն զետի խորհրդային իշխանությունը: Առանձնապես կարեվոր է բեկումը գյուղական ուսուցչության ու ազգության մեջ, վորոնք կարող են հիմնական շաղկապ գառնալ քաղաքի և գյուղի միջև: Սակայն ինտելիգենցիայի լայն խավերի գարձը խորհրդային իշխանության կողմն իր հիմքում չափազանց դրական յերեվոյթ լինելով հանդերձ՝ կարող եւ ունենալ և բացասական հետեվանքներ, վորովհետեւ դա կոմունիստների իդեոլոգիական ըրջապատռմի վտանգը մեծացնում է: Ուստի կուսակցության գաղափարախոսական մաքրության նպատակով մանր-բուրգուրական և սմենովիխյան պարուրման գեմ մզկելիք պայքարը նույնպես կուսակցության հերթական խնդիրներից մեկն է:

2. ԿՈԽՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԸՆԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Վերջին ամիսների բացասական յերեվոյթները՝ ինչպես բանվոր դասակարգի կյանքում, այնպես և կուսակցության ներսում, պարտադիր են դարձնում այն յեղակացությունը, թե կուսակցության շահերը՝ ինչպես տնտեսական նոր քաղաքականության ազգեցությունների գեմ մզկելիք պայքարի հաջողության իմաստով, այնպես և աշխատանքի բոլոր ճյուղերում նրա ունեցած ուազմունակության մաքով՝ պահանջում են լրջորեն կուսակցության ուղղությունը՝ բանվորական դեմոկրատիայի սկզբունքներն իրապես ու սիստեմատիքաբար կիրառելում: Յելակետ ընդունելով այդ՝ կե և կվշյի միացյալ ընդհանուր ժողովը վորոշեց:

«Կե և կվշյի պլենումները լիովին հավանություն են տալիս քաղաքական բյուրոյի ժամանակին ընդգծած ուղղությանը՝ ներկուսակցական դեմոկրատիայի նկատմամբ, նայել քաղաքական բյուրոյի առաջարկությանը՝ ուժեղացնելու պայքարն ուստի առաջարկությանը՝ ուժեղացնելու պայքարը»:

վելորդությունների» և տնտեսական նոր քաղաքականության՝ կուսակցության առանձին անդամների վրա ունեցած քայլքայի ազգեցության դեմ:

Բանվորական դեմոկրատիան նշանակում է ազատություն՝ կուսակցության բոլոր անդամների համար՝ բացարձակ քննելու կուսակցական կյանքի կարելորագույն հարցերը, մտքերի ազատ փոխանակություն նրանց մասին, այլև ընտրականություն պաշտոնատար անձանց և կոլեգիաների՝ վարից վեր: Առաջն բանվորական դեմոկրատիան բնավազագույն չի նախատեսում ֆրակցիոն խմբակցությունների համար, վորոնք ծայր աստիճան վասակար են զեկավար կուսակցությանը, վորովհանել միշտ սպառնում են յերկրություն ու բնկումն առաջացնել կոսավարության և պետական ամբողջական ապարատի մեջ:

Ի՞նքնըստինքյան պարզ ե, թե կուսակցության ներսում, վորը հանդես է գալիս վորպես վորոշ գաղափարական և գործնական հողի վրա կանգնած մարդկանց կուտափոր միություն, անհանդուրժելի յեն այնպիսի խմբակցություններ, վորոնց գաղափարական բավանդակությունն ուղղված է ընդհանրապես կուսակցության և պրոլետարիատի դիկտատուրայի դեմ (ինչպես որինակ՝ «Բարոչայա Փրավդան» «Բարոչայա Գրավդան»):

Միայն մշտական, կենդանի գաղափարական կյանքը կարող է պահպանել կուսակցությունն այնպես, ինչպես նա կազմվել է հեղուկությունից առաջ ու նրա ժամանակ՝ մշտապես կրիտիքար ուսումնասիրելով իր անցյալը, ուղղելով իր սիալներն ու հավաքական ուժերով քննելով կարիքոր խնդիրները: Աշխատանքի այդ մեթոդներն են միայն, վոր ընդունակ են իրական յերաշխիքներ առլու առ այն, թե պատահական տարածայնությունները չեն փոխվի ֆրակցիոն խմբակցությունների՝ վերոհիշյալ բոլոր հետևանքներով:

Դրա առաջն առնելու համար պահանջվում է, վոր զեկավար կուսակցական մարմիններն ունկնդրեն լայն կուսակցական մասսաների ձայնին, չհամարեն ամեն մի քննագույն ֆրակցիոն արտահայտություն և զրանով չմղեն բարեկիրդ ու կարգապահ կուսակցականներին զեղի մեկուսացումն ու ֆրակցիականության ուղին:

Կուսակցությունը վոչ մի գեպքում չի կարելի հաստատություն կամ վարչություն համարել, բայց նա չի կարող համարվել նայել զիսկուսիոն ակումբ բոլորի ու ամեն տեսակ ուղղու-

թյունների համար: 10-րդ համագումարը սահմանեց բանվորական դեմոկրատիայի սկզբունքները, բայց միենույն 10-րդ համագումարը, իսկ հետո 11-րդ և 12-րդ համագումարները, միշտ սահմանափակումները մտցրին բանվորական դեմոկրատիայի սկզբունքները գործադրելու գործի մեջ. Փրակցիաների արգելը. (տես 10-րդ համագումարի բանաձեկվը «Կուսակցության միականության մասին» և 11-րդ համագումարի համապատասխան բանաձեկվը), կուսակցության գտումն, կուսակցության մեջ վոչ պրոլետարական տարրերի ընդունելության սահմանափակումն, կուսակցության պաշտոնատար անձանց վորոշ կատեգորիաների համար կուսակցական ստաժի սահմանումն, քարտուղարներին հաստատումն բարձր կուսակցական կազմակերպության կողմից (տես կուսակցության կանոնադրությունը), Անխուսափելի համարելով այդ սահմանափակումների պահպանել՝ այսուհետեւ յիշու, տնտեսական նոր քաղաքականության պայմաններում ընդունելի անհրաժեշտ և արդեն ունեցած, մանավանդ ստորին կազմակերպությունների փորձառության հիման վրա ստուգել այդ սահմանափակումներից մի քանիսի նպատականարմարությունը, որինակ՝ քարտուղարներին հաստատելու կուսակցական բարձր ինստանցիաների իրավունքը: Համենայն զեղս չի կարելի թույլ տալ քարտուղարներին հաստատելու իրավունքը վերածել իրավիս նրանց նշանակելու իրավունքի:

3. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳԵՄՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱԾԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԵՄՆԵՐԱԿՎԵԼԻ ԱՆՄԻՋԱՑԱՆ ՄԻՋԱՑՆԵՐԸ

Կուսակցական ուղեգիծն աղավաղելու դեմ պայքարելու նպատակով, իրավիս բանվորական դեմոկրատիա կազմելու և կուսակցության անդամների ամրող զանգվածին կուսակցական ամրող քաղաքականության ուղղության վրա սիստեմատիք կերպով ապդելու հնարավորությունն ապահովելու համար, անհրաժեշտ և ամենից առաջ կիրառել հետեւյալ միջոցները:

ա) Հսկել պաշտոնատար անձերի խիստ ընտրությունն կատարելու վրա՝ այն սահմանափակումներով, վորոնք մատնանշշված են վերել. անթույլատրելի համարել այդ անձերին զոռով ուրիշների վզին կապելը՝ կազմակերպության կամքի հակառակ. մասնավորապես ուղարկությամբ հետեւյալ բջիջների քարտուղարների ընտրություն կատարելուն:

բ) Կուսակցական քաղաքականության բոլոր իրական հար-

շերն անպայման ներկայացնել բջիջների և կուսակցական զանգվածի ամբողջության քննությանը, յեթե այդ բանին արզելք չեն լինում փորեվե բացառիկ հանդամանքները. ընդարձակել կուսակցական՝ մաքեր փոխանակելու՝ ակումբների ցանցը. «կուսակցական դիսցիվինայի» անձիշտ ցուցումների չդիմել, յերբ հարցը վերաբերում և կուսակցության անդամների իրավունքին և պարտականություններին՝ իրանց հետաքրքրող հարցերը քըննելու և վճիռներ կայացնելու:

գ) Ուշադրություն դարձնել ստորելից՝ առաջին հերթին բանվորներից, նոր աշխատավորներ առաջ բերելու խնդրի վրա:

դ) Առանձին ուժադրություն դարձնել կուսակցական զանգվածի հետ անմիջորեն շփող ընկերների կազրի կուսակցական ուղիղ քաղաքանության յուրացումի վրա:

ե) Գործածական դարձնել կուսակցական կազմակեպությունների պարտադիր հաշվետվությունն իրանց ընտրող կոլեկտիվներին և կուսակցական լայն զանգվածին:

զ) Ուժեղացնել կուսակցական դաստիարակչական աշխատանքը՝ ամեն կերպ խուսափելով պաշտոնական ձեվերից՝ վորպես կուսակցական ամբողջ զանգվածի մեջ, այնպես ել առանձնապես կոմսոմոլիստների և կանանց մեջ:

է) Ուշադրություն դարձնել աշխատանքի տարրեր ճյուղերի աշխատավորների փորձառությունն իրար մեջ փոխանակելու վրա. պարտադրիչ և կազմակերպել, վորպես կե-ում, այնպես ել շրջկոմիներում, նահկոմներում և զավկոմներում աշխատանքի բոլոր ճյուղերի պատասխանատու խաշխատակիցների պարբերական խորհրդակցություններ:

ը) Կուսակցության անդամների ինֆորմացիան ուժեղացնել մամուլի և կե-յի, կվ-չի, շրջանային և նահանգական կոմիտեների անդամների և կոմիսարիատների կոլեգիաների անդամների և ուրիշների՝ տեղերը շրջելու միջոցով:

թ) Ուժեղացնել կուսակցական կյանքի բաժինները պարբերական մատուլում:

ժ) Մերձակա կուսակցական համագումարին առաջարկություն անել՝ նահանգային և ընդհանուր կուսակցականների կոնֆերենցիա գումարել առարին յերկու անգամ:

Վորքեսպի ապահովենք վերը նշած միջոցների իրական կիրառումը բանվորական գեմոկրատիա ստեղծելու համար, անհրաժեշտ և խոսքից գործի անցնել՝ առաջարկելով ստորին

բջիջներին, գավառային, շրջանային և նահանգային կուսակոնֆերենցիաներին, հերթական ընտրությունների ժամանակ սիստեմատիկ կերպով նորոգել կուսակցական ապարատը վարեց՝ պատասխանատու պաշտոնների վրա դնելով այնպիսի աշխատակիցների, վորոնք ընդունակ են իրապես ապահովելու ներկուսակցական դեմոկրատիան:

4. ՎԵՐՍՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ա. Կուսակցության առաջ արդեն դրված և մեր պետական ապարատը լավացնելու կարելորագույն հարցը: Այդ աշխատանքը մեծ ժամանակ և պահանջում, վորպեսպի կարողանա տալ իրական և զգալի հետեւանքներ: Պետական ապարատը լավացնելու և զարդում վերաստուգիչ հանձնաժողովների և ԲԳՏ-թյան աշխատանքների աջողության հիմական պայմանն այն ե, վորայդ աշխատանքներին նպաստեն ամրող կուսակցությունն ու նրա կազմակերպությունները և այդ աշխատանքին լծեն հենց աշխատավոր զանգվածներին: Անհրաժեշտ և ավելի սերտ կապ վերաստուգիչ հանձնաժողովների և համապատասխան կոմիտեների միջև և վերստուգիչ հանձնաժողովների ու ԲԳՏ-թյան գործունեյության ավելի գործոն արտաբերում կուսակցության և աշխատավոր զանգվածների հասարակական կարծիքի ասպարեզը:

բ. Վերջին ամիսների փորձը ցույց և տվել, վորացի կենտրոնական վերստուգիչ Հանձնաժողովից պետական ապարատի հարցերով պետք և զբաղվեն նայել տեղերի, նահանգների և շրջանների վերաստուգիչ հանձնաժողովները, և այդպիսով տեղական վերաստուգիչ հանձնաժողովների փունկցիաների ընդլայնումի հարցը պետք և որակարգի մեջ դրվի:

դ. Իրբեկ պետական ապարատն ուսումնասիրելու և բարելավելու գործին աշխատավորներին մասնակից անելու ձեվեր կարող են լինել ձեռնարկությունների և պետական հաստատությունների նպաստիչ բջիջները, վորոնց կազմակերպում են վերաստուգիչ հանձնաժողովն ու Բանվորա-Գյուղացիական Տեսչությունն արհմիությունների հետ միասին: Զեռնարկությունների կուսակցական բջիջները պետք և սերտերն կապված լինեն ԲԳՏ նպաստիչ բջիջների հետ և զեկավարեն նրանց աշխատանքը փարզավորմների միջոցով:

դ. Վերստուգիչ հանձնաժողովների առանձնապես կարելոր անելիքն և ներկայումս կուսակցական ապարատի և կուսակցական պրակտիկայի բյուրոկրատական խեղաթյուրումների գե-

պայքարելը և պատասխանատվության յենթարկել կուսակցության այն պաշտոնատար անձերին, վորոնք խոչընդուռ են հանդիսանում իրագործելու բանվորական գեմոլիրատիայի սկզբունքը կուսակցական կազմակերատությունների գործունեյության մեջ։ (ժողովներում արտահայտվելու ազատության ճշշում, կանոնագըրքով չնախատեսնված ընտրողական սահմանափակումներ, և այլն)։

ե. Ներկա պայմաններում առանձին նշանակություն ունի վերտուգիչ հանձնաժողովների պայքարը պետական ազարատի և նրա զատ-զատ ղեկավարների կողմից թույլատրվող, այսպես կոչվող «ավելորդությունների» գեմ։ Ներկի բացասական կողմերի այլասեռող ազգեցությունը մեր կուսակցության անդամների վրա և մասնավորապես առանձին-առանձին պատասխանատու աշխատակիցների վրա մեր ամրող կուսակցության կողմից պետք և վճռական դիմադրության հանդիպի։

զ. Անհրաժեշտ և ստուգել կուսակցական ծայրահեղ ըեպի-սիաների (կուսակցությունից հեռացնելու) կիրառումները։ Դաշտական վրա բանող արտադրիչ բանվորների վերաբերմամբ, պետք և ի հայտ բերել աշխավելագույն ուշագրություն և ծայրահեղ միջոցները (կուսակցությունից հեռացնելը) պետք և այստեղ կիրառվեն սոսկ հիբավի անհրաժեշտ դեպքերում, այսինքն, յերբ կուսակցական ներգործության մյուս միջոցներն սպառված են։

վերջապես անհրաժեշտ և, վոր առաջները կուսակցությունից վտարվածները, մանավանդ արտադրիչ բանվորներն ընկերական վերաբերմունքի հանդիպեն, յերբ դիմում են կուսակցության մեջ կրկին ընդունվելու համար և յերբ դրա հետ հիմք կահուսալու, վոր նրանք ճշտիվ կկատարեն կուսակցական պահանջները։

5. ԿՈՒՍԱԿՑԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱՇԽԱՏՄԱՆ

Մեր մեծագույն և անզնահատելի առավելությունն և այն իրողությունը, վոր մեր կուսակցության շարքերում մենք ունինք անտեսական աշխատանքի բոլոր տեսակների մասնակիցներ, սկսած դազգահի վրա աշխատող պրոլետարից և վերջացրած նրա առավել պատասխանատու ղեկավարներով։ Այս բոլոր զործագորները պարտավոր են՝ և զործն ուղիղ հիմքի վրա դնելուց կարող են՝ իրանց արտակարգ բաղմանմանի կոլլեկտիվ անտեսական փորձառությունը մուծել անտեսական աշխատանքի իրա-

կան կուսակցական ղեկավարության մշակումի գործի մեջ։ Անհրաժեշտ և անտեսավարներին իրանց աշխատանքի շրջանակում ապահովել բավականաչափ ինքնուրույնություն և կուսակցության լիակատար պաշտպանությունը։ Կուսակցական սիստեմատիկ ղեկավարությունը բնավ չպիտի թույլ տա իրան պատահական և յերկրորդական առիթներով նրանց կապը քաշել։

Այս նպատակներով անհրաժեշտ և, վոր կոմբջիջները մոտենան արտադրությանը, կոմունիստացիան և կուսակցական միավետապությունը ու ինքնորմացիաները պետք և կանոնավոր պարբերական գառնան։ ղեկուցումները պետք և ըստ եյության քննության յենթարկվեն, անհրաժեշտ և անտեսական միացումի (որինակ՝ տրեստի) մեջ մտնող ձեռնարկությունների բջիջների և կուսակցական անտեսական կոնֆերենցիաների կումունիստների սիստեմատիկ խորհրդակցություններ կազմակերպել, բջիջների ներկայացուցիչները պարտավոր են ղեկուցումներ տալ իրանց բջիջներում այլպիսի կոնֆերենցիաների մասին։ Անհրաժեշտ և շատ ավելի սիստեմատիկորեն ընդհանրացնել ստորին բջիջների փորձն ու ցուցմունքները։

6. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԶԱՆԳՎԱԾՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՄԵԼԸ

Զանգվածներին զործնական շինարարության լծելու աշխատանքը պետք և ուժիղացի հենց պետական ազարատը մտսաներից կարգելու վտանգի պատճառությունն ու ինքնորմացիան անտեսավարների կողմից պետք և կիրառվեն նայել զանգվածների վերաբերմամբ (բանվորների պատգամավորների և ընդհանուր ժողովներ, ֆարզավորմաներ, անկուսակցական բանվորներ և զյուղացիական կոնֆերենցիաներ և այլն)։

Առանձին ուշագրություն պետք և դարձնել նայել, վոր արհմիությունները մոռնան արտադրությանը։ Անհրաժեշտ և ուժիղացնել արհմիությունների ազգեցությունը անտեսական պաշտանների համար նոր մարդիկ ընտրելու և տաջ քաշելու զործում, անտեսարդանների աշխատանքների վերահսկողության գործում (հազին նշանակություն ունի նաև աշխատավարձն իր ժամանակին վճարելու, նրա համարավոր ձեզի և այլն վերահսկողությունը), արհմիությունները պետք և գումարեն միությունների (տրեստների) արտադրողական կոնֆերենցիաներ՝ ֆարզավ-

կոմիտեի ներկայացուցիչների և ձեռնարկությունների ղեկավար-ների մասնակցությամբ արհմիությունները պետք ե իրենց աշխատանքների արտացոլումը տան արհեստակցական մամուլում, վորը պետք ե բարելավել և ամրապնդել:

Ամեն միջոցով պետք ե ուժեղացվի բանվոր թղթակիցների ինստիտուտը, թղթակիցների, գորոնց անհրաժեշտ և խնամքով պահպանել ամեն մի կազյոնշինայից և բյուրոկրատիվմից: Կուսակցական և խորհրդային մամուլին պետք ե պարտավորեցնել մաքսիմալ ուշադիր ականջ դնելու մասսայի կողմից յեկող պահանջներին ու առաջարկներին:

Բանվորական և գյուղացիական խորհուրդների ընտրություններին պետք ե ուշադրություն դարձնել նոր մարդիկ առաջ քաշելու վրա, կուսակցականների հետ միասին ընտրել անկուսակցական բանիմաց բանվորների, դրանց մտցնել գործոն աշխատանքի մեջ (քաղխորհրդի սեկցիաների աշխատանք, բանվորների և գյուղացիների ներկայացուցիչներով Գործկոմների ու բաժանմունքների, ԲԳՏ նպաստիչ բջիջների խորհրդակցություն և այլն):

Անկուսակցական լայն կոնֆերենցիաների գործադրությունը պետք ե ուժեղացնել, ամեն տեսակ կամավոր ինքնագործոն միությունների — կուտուրա - լուսավորչական, մարդարային և այլն — աճումին նպաստել, մանավանդ այնպիսիների, վորոնք անմիջորեն շոշափում են բանվորական զանգվածի ընտանեկան-հասարակական կենցաղը՝ ապահովելով նրանց ուղիղ զարգացումի կարելիությունը:

Անհրաժեշտ է լայնորեն սփռել բջիջներում բաց ժողովների գործադրությունը և այդ բաց ժողովների հիման վրա ջոկել մեր կուսակցության անկուսակցական գործոն ոգնականների կազմ:

Բ Ա Ն Ա Զ Ե Վ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՄԻԱՅԱՅՆ ԿՈՒՍ. XIII ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ)

Տնտեսական քաղաքականության հերթական հարցերը վը-ձնելիս կուսակցությունը պետք ե յենի տվյալ պատմական ժամանակաշրջանի համար իր հիմնական խնդրից, — պրոլետարիատի և գյուղացության միության խսկական իրականացումից, քաղաքի և գյուղի, ազգայնացրած արդյունաբերության ու գյուղացության մերձեցումից:

Միմիայն հարցերի ճիշտ լուծումը, վորոնք առաջանում են բանվորական դասակարգի և գյուղացիության հարաբերությունների բնագավառում, առանձնապես և վերջնականապես կամրացնի պրոլետարիատի զիկտատուրայի տնտեսական հիմունքը և կապահովի նրան զանազան ցնցումներից:

Կուսակցության XII-րդ համագումարը արդյունաբերության կազմակերպության մասին հանաձ իր բանաձեկում հատկապես առաջ քաշեց և ընդդեց այն ցուցմունքը, թե մեր պետական սրբյունաբերության զարգացման տեմպի առաջ դրված են որյեկտիվ շրջանակներ, վորոնք բնորոշվում են գյուղացիական տնտեսության դրությամբ և թե ամբողջ տնտեսական քաղաքականության խնամքով կատարված համաձայնեցումը գյուղացիական տնտեսության զարգացման մակարդակի հետ՝ կազմում և այն ամենակարեվոր խնդիրը, վորի անճիշտ լուծումը անխուսափելիորեն կործանարար հետեվանքներ կառաջացնի վոչ միայն տնտեսության, այլև քաղաքական բնագավառում: Միմիայն այժմյան քաղաքական և տնտեսական պայմանների արմատական փոփոխությունը Յելլուպայի արդյունաբերական յերկրներում, կարող եր լուրջ կերպով թուլացնել պետական արդյունաբերության անմիջական կախումը գյուղացիական տնտեսության դրությունից և դեպի սոցիալիստական տնտեսության տիրապե-

առւթյունը ավելի արագ կերպով անցնելու պայմաններ ստեղծել:

XII Համագումարի քանաձեզն ասում եւ «Գյուղական տնտեսությունը, չնայելով այն բանին, վոր նա զեռ մեզ մոա զբանը ու ե ցածր տեխնիքական մակարդակի վրա, առաջնակարգ նշանակություն ունի Խորհրդային իշխանության ամբողջ եկոնոմիկայի համար... Մեր կուսակցությունը միաժամանակ չպետք է կուն մի քող մոռանա և կամ թեկուզ աշխաթող անի իր ամեն մի քայլը զնահատելու գյուղացիական տնտեսության փաստորեն գերակող նշանակությունը... Վոչ միայն անզիտանալը, այլ և վոչ բավականաչափ ուշադիր գերաբերութունք ցույց տալը դեպի այս հանգամանքը կարող և բազմաթիվ վրտանգների պատճառ դառնալ թե տնտեսական, և թե զուտ-քաղաքական բնագավառում, վորովհետեւ անխուսափելիորեն նակը քայլայեր կամ կթուլացներ պլուստարիատի և գյուղացության այն միությունը, գյուղացության այն վասահությունը դեպի պլուստարիատը, վորոնք տվյալ պատճական անցողիկ ժամանակաշրջանի համար հանդիսանում են պլուստարիատի դիմուտուրայի ամենահիմնական հենարաններից մեկը, և վորոնց պաշտպանությունն ու ամբացումը Խորհրդային իշխանության կայունության հիմնական պայմանը, և հետեաբար, կուսակցության հիմնական խնդիրն և հանդիսանում:

Կուսակցության այս սիստեմատիք ցուցմունքները մինչև այժմ լիակատար արտացոլում չեն ստացել մեր տնտեսական մարմինների զործականի մեջ: Շատ և շատ անրավական չափով և յուրացված այն, վոր քաղաքի և գյուղի միջև բառ հնարավորին ավելի լայն չափով Փոխանակություն հաստատելու անհրաժեշտությանը նոր տնտեսական քաղաքականության անցնելու հիմնական պատճառն և յեղել, և վոր նոր տնտեսական քաղաքականության գեպքում գյուղացությանը պիտական արքյունաբերության մթերքներ մատակարարելու գործը հիմնական տնտեսական մի խնդիր և հանդիսանում:

Այժմյան մեր վերացրած տնտեսական գեպքարությունները (սպառման ճգնաժամ) բավական չափով բացարձում են կուսակցության ցուցմունքները վոչ բավականաչափ հաշվի տնտեսակցության ցուցմունքներ, վորոնք վերաբերում են գյուղացիական տնտեսության գերին ու նշանակությանը և այն առանձնահատկություններին, վորոնք բղառում են պլուստարիատի դիմու-

տատուրայի իրականացման խնդրից գյուղացի ազգաբնակությամբ գերակշռող մեր յերկրում:

Կուսակցության խնդիրը հետագայում պետք և կայանանքանում, վորպեսզի սիստեմատիկ և ուշադիր կերպով կիրառվի վերեվ հրշագագականությունը քաղաքի և գյուղի հարաբերությունների բնագավառում, թույլ չտալով տնտեսապես և բարդագանապես վասակար շեղումներ կատարել դեպի գյուղացիական անհամառ պատճառության նշանակության վոչ բավականաչափ գնահատման կողմը յերկրի ընդհանուր տնտեսական ստրուկտուրայի մեջ:

Մի կողմից գյուղացիական տնտեսության և մյուս կողմից պետական արդյունաբերության վերականգնման տեմպի միջեւ գոյություն ունեցող անհամապատասխանության հիմունքի վրա, ազատ ապրանքաշրջանառության պայմաններում, առաջացան վերջին ժամանակի ճգնաժամի յերեվույթները: Այդ ճգնաժամը ընորոշվում և արդյունաբերական գործվածքների անչափ բարձր գների և գյուղական տնտեսության մթերքների ցածր գների միջեւ գոյություն ունեցող մեծ տարբերությամբ: Արդյունաբերությունը, վորը զարգացել եր ավելի բարձր արժեքներով գնումներ կատարելու ընդունակ քաղաքային շուկայի հիման վրա, չկարողացավ գյուղական բերքի սեալիզացիայի մոմենտին սպառել իր ապրանքը ավելի պակաս վճարունակություն ունեցող մասսայական սպառող գյուղացությանը: Մյուս կողմից, գյուղացությունը չկարողացավ գտնել բավականաչափ լայն, թե ներքին և թե արտաքին շուկա՝ շահավետ կերպով ծախելու համար իր հացը, վորի պատճառով վերջինիս զինը ցածր մնաց:

Սպառման ճգնաժամի սրությանը սպառնում եյին՝ առեվտրական հարաբերությունների վոչ բավականաչափ զարգացումը, սինդիկատների բարձր գների քաղաքականությունը, վերադիր ծախսերի բարձրությունը թե արդյունագործության, և թե մանավանդ առեվտրի բնագավառում, դրամական տնտեսության թույլ զարգացումը, ինչպես և յերկու վայլյուտների սիստեմը, վորի ժամանակ ամենից շատ գյուղացությունն եր վնասվում խորհրդային դրամանիշների գնի ընկնելուց:

Համաստանը հետեւանքով, անցած տարին տվեց անպայման մեծ հաջողություններ արդյունաբերության և արանսպորտի վերականգնման գործում և ավելի մեծ քանակությում ապրանք, վոր արտադրվեց պետական արդյունագործու-

թյան մեջ, քան յերբեկից Խորհրդային իշխանության գոյության ընթացքում: Մյուս կողմից գյուղացությունը անկասկած տեծացրեց իր վարելահողի բաժինը, վորոշ չափով բարձրացրեց իր տնտեսությունը, ուժեղացրեց համուկ մշակույթների արտադրությունը, և, շնորհիվ բնական մթերքներով տրվող հարկի մեծ մասը գրամականի փոխելուն՝ իր արամազդության տակ ուներ ավելի մեծ քանակությամբ հացի պաշար, հակառակ նույնական այն բանի, վոր այս տարվա բերքը, անցյալ տարվա համեմատությամբ ավելի քիչ է:

Այսպիս ուրիմ, այժմյան ճգնաժամը յերեք չի կարելի համեմատել ապրանքի և հացի այն պակասության հետ, վոր գոյություն ուներ մեր յերկում 1919—20—21 թվականներին: Ժողովրդական տնտեսության հիմնական ելմենտներն իրենց ամբողջության մեջ (արտադրվող ածուխի, նավթի, մետաղի, բամբակի քանակությունը, գյուղացության ձեռքում մնացած հացը և այլն), անկասկած անել են: Ճգնաժամը ժողովրդական տնտեսության այդ առանձին բնագավառների միջեկ տիրող անհամապատասխանության, և առաջին հերթին, գեպի գյուղացիական մասսայական շուկան ճանապարհ բաց անելու մեջ մեր պետական արդյունագործության և առեսրի կողմից ցուցահանած անկարողության հետեւանքն և հանդիսանում:

I

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղացիական շուկայի փոքրիկ տարողությունը և ցածր վճարունակությունը, ինչպես և քաղաքային արդյունաբերության մթերքների բարձր ինքարժեքը, արտացոլում են իրենց մեջ արտաքին և ներքին պատերազմների յերկար ժամանակաշրջանակությունը, համապատասխան միջնաշխարհային յերեխույթ և, վորը կապիտալիստական իշխելը որինակ Ամերիկայում, պատճառ և գարձել մեծ յերկըներում, որինակ համապատասխան արհեստական քանակությամբ հացի վոչչացնելուն (այրելուն) արհեստական կերպով գները բարձրացնելու համար: Սոց. Խորհ. Հանրապետությունը գյուղաքային և արդյունագործական ազգաբնակությունն աչքի ընկնող շամանության մասին աշքի ընկնող շուկա չի ներկայացնում գյուղական տնտեսության համար: Գյուղացու հացը կարող է գնի կողմից բարձրացնալ՝ ամենից առաջ նրա կողմից ոտարեկրյա շուկաները

գրավելու հետեւանքով: Դեռ անցյալ ամքի կուսակցությունն այս հանգամանքը հաշվի յեր առել և սահմանել եր գյուղական տնտեսության մթերքների արտահանության բազմազիմի զարգացման անհրաժեշտությունը արտասահմանում: Անցյալ տարի արտահանված եր 40 միլիոն փութ հաց, այս տարի, վարպետնույն ամենակարեվոր խնդիրը՝ գրված և 250 միլիոն փութ հաց արտադրելու խնդիրը:

Բայց գյուղացու հացի հաջող կոփիլը արտասահմանյան շուկայում պահանջում է գյուղական տնտեսության հարմարեցումը այդ շուկայի պայմաններին: Կուսակցությունն որվա հերթական հարց դարձրեց գյուղացիներին ցույց տրվելիք ոգնությունը՝ նրա անտեսության տեխնակական մակարդակի բարձրացման գործում, ավելի ինտենսիվ կուլտուրաների ներածումը, գյուղացիական տնտեսության շրջանառության միջոցների մեծացումը, նրա ունեցած գույքի վերանորոգությունը, և այլն:

Առաջին հերթին պետք է բարզովի պետական հացի գնումների և պետական արտահանության կազմակերպությունը, պիտի իջեցվեն վերադիր ծախսերը այս բնագավառում, մաքսիմալ չափով պիտի կրճատվեն ամեն տեսակի միջնորդների և գնորդների գերն ու յեկամուտները հացի առեվտրի մեջ:

Խորհրդային իշխանությունը կարող է և պիտք է ոգնության գույղացությանը նույնպես նրա շրջանառության միջոցների մեծացումով,—ա. եժան գյուղատնտեսական վարկ կազմակերպելով (գյուղատնտեսական բանկի կազմակերպումը), բ. գյուղացությանը, արտօնյալ վարկի պայմաններով, գյուղատնտեսական գործիքներ ու մեքենաներ առաջադրնելով գ. գյուղական կոոպերացիային աջակցություն ցույց տալով, և այլն: Գյուղացության վերաբերմամբ ձեռք առած իր բոլոր միջոցների մեջ կուսակցությունը պետք է յելնե բազմազիմի ոգնության անհրաժեշտությունից գյուղացիության ամենաչքավոր ու միջին խավերին, մասամբ հողը համայնորեն մշակող ընկերություններին՝ նրանց կուլտուրների բռնության ձեռքից ազատելու նպատակով: Բայց այս առանձին ուշադրություն պիտի գարձի հետամաց ժողովուրդների շահերի ապահովության վրա առանձին ծայրերկրային շրջաններում և հանրապետություններում:

Գյուղացիական տնտեսությունը հիմնական բազան և հանդիսանում արդյունագործության վերականգնման համար, և հետեւակար, բանկոր գասակարգի ամման համար, վորովհետեւ գյու-



զացիական շուկան հանդիսանում և արդյունագործության գործվածքների համար հիմնական մասսայական մի շուկա: Գյուղացիական տնտեսությունը մյուս կողմից հում նյութերի հիմնական մատակարարողն և հանդիսանում մեր արդյունագործության համար: Այդ իսկ պատճառով, ըստ հնարավորին մեծ աջակցություն և պահանջվում ցույց տալ գյուղացիական տնտեսությանը վոչ միայն Խորհրդային իշխանության ընդհանուր շահերի, այլ և իրեն, արդյունագործության ամենա-արագ զարգացման շահերի տեսակետից:

II

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Միմիայն ազգայնացրած խոշոր արդյունագործության զարգացումն և ստեղծում պրոլետարական դիկտուտուրայի անսասան հիմունքները: Յելնելով այս բանից՝ կուսակցության XII համագումարը ճշգրիտ ցուցմունքներ տվեց այն միջոցների նկատմամբ, վորոնց պիտի ընդունի կուսակցությունը և սիստեմատիքարար կիրառի կյանքի մեջ՝ մեր պետական արդյունագործության ամրացման և զարգացման համար:

Պետական արդյունագործությունն անցած տարի բավականաշափ զարգացավ, ավելացրեց իր արտադրողականությունը և բարվորեց ապրանքների հատկությունը, ըստ վարում, արագության աճումն ընթանում եր ամսե ամիս՝ առանց սուր տառատանումների և թոփչքների:

Խոշոր պետական արդյունագործության զարգացման տեմպը անցած տարի վարով չափով զերազանցում եր գյուղական տնտեսության և մանր ու տնայնագործական արդյունագործության զարգացման տեմպին: (Յեթե վերցնենք խոշոր արդյունագործության ամբողջ արտադրողականությունը, ապա 21 թվականի համեմատությամբ, նա մեծացել և զրեթե յերկու անգամ: Պետական արդյունագործության արտադրողականության ընդհանուր գումարն աճել ու հասել ե նախապատերազմյան շրջանի 35 տոկոսին, մինչդեռ նախընթաց տարին նա կազմում եր միմիայն վերջինիս 20—22 տոկոսը):

Մասնագորապես, վառելիքի հնտեսության մեջ ձեռք բերվուծ հաջողությունները ապահովում են արդյունագործության մեջացած բնագավառների հետագա վերականգնման հնարավորու-

թյունը: Տրանսպորտն այնպիսի դրության մեջ և գտնվում, յերբ նա առանց վորեվի դժվարությունների ընդունակ և բավարարել ժողովրդական տնտեսության կողմից նրան առաջադրած բոլոր պահանջները: Դրա հետ միասին անհրաժեշտ է շեշտել այն մի շարք անհաջողությունները, վոր ձեռք և բերված արտագործության կազմակերպության գործում ֆարբիկաներում ու գործարաններում և արդյունագործության կազմակերպության գործում ամբողջապես վերցրած:

Սակայն վերացրած այս ճգնաժամը բաց արեց նայել այս բնագավառում մի շարք վատառողջ յերեվույթներ, վորոնց հեռացումը կուսակցության համար հերթական ինդիքներ և համարվում:

Վնասները ծածկելու հետեւից ընկած, վոր կրեց արդյունագործություը տնտեսական նոր քաղաքականության առաջին տարին, մի շարք տնտեսական որդաններ անձիշտ կերպով կիրառեցին XII համագումարի գիրեկտիվը շահավետության ձըգտելու անհրաժեշտության մասին և չափից դուրս բարձրացրին գները մինչեւ այն աստիճան, վոր մատչելի եր սոսկ ավելի վճարունակ շուկայի: Ապրանքների բարձր գները դեմ առ դեմ յեղանգյուղացիական մասսայական շուկայի ցածր վճարունակությանը: Ապրանքները մնացին չծախսված և վոչ միայն արդյունագործությանը սպասված ողուտները չտվին, այլև նրա ձեռնարկներին անվճարությունների ու արտադրության կրածաման սպառնալիքի առաջ դրին:

Շուկան գրավելու և միասնական գներ սահմանելու կովում առաջացած սինդիկատները բարձր գների այդ քաղաքականության անմիջական հաղորդիչները յեղան: Այդ քաղաքականությունն արդյունագործության առանձին բնագավառների մեջաշնորհային կազմակերպության անձիշտ ողտագործման անմիջական հետեւյանքն ե հանդիսանում կարգավորող որգանների վոչ բավականաշափ զարգացման գեպքում:

Սոցիալիստական կուտակումը պրոլետարական դիկտուտուրայի վիճակի համար հիմնական և վճռական գործուն և հանդիսանում տնտեսական նոր քաղաքականության ժամանակ: Սակայն սխալ և սոցիալիստական շինարարության տեսակետից, յերբ մթերքների գնի մեջ, ինքնարժեքից և անհրաժեշտ մինիմալ շահից բացի, մտցվում են այդպիսի արագ վերականգնման և հիմնական կտպիտալի ընդունակման վրա կատարված ծախ-

սերը, վորոնք բացարձակ կերպով տվյալ բռպելին յերկրի աղ-
գաբնակության հիմնական մասսայի ույժերից վեր են: Անհրա-
ժեշտ և հետագայում ավելի մեծ չափով համաձայնեցնել գների
քաղաքականությունը գյուղացիական ամենազլավոր շուկայի
հետ և արդյունագործության զարգացման տեմպն ել համաձայնե-
ցնել ավելի խիստ, քան մինչև այժմ յեղել և գյուղացիական
շուկայի տարողության ընդլայնման ընդհանուր ընթացքի հետ:

Հնթացիկ տարվա մեջ գործածության առարկաների պե-
տական արդյունաբերության արտադրության ընդհանուր գու-
մարից 0,7 գնացել և քաղաքային գործածության վրա և միայն
0,3 գյուղացիական սպառողության բավարարության համար:
Այս բանը ցույց է տալիս, վոր մեր արդյունագործությունը
չկարողապավ բավականաչափով իրեն համար ճանապարհ բաց
անել գեղի գյուղացիական մասսայական սպառողը:

Այն բարձրությունը, վորին հասան արդյունաբերական գործ-
վածքների գները անցած տարի, բացատրվում է վոչ միայն որյեկ-
տիվ պատճառներով այլ և բավականաչափ թերություններով ար-
դյունագործության կազմակերպության ընազավորում, ինչպես և
վերադիր ծախսերի այն խնայողության բացակայությամբ, վորը
չափազանց անհրաժեշտ և հանրապետության տնտեսության վերա-
կանգնման համար: Ֆների իջեցման քաղաքականությունը պետք է
արդյունագործության ուշագրությունն ուղղե գեղի ինքնարժեքի-
իջեցումը արտադրության հետագա բարվոքման ու ընդլայնման,
վերադիր ծախսերի մաքսիմալ կրճատման միջոցով, ինչպես և
գեղի նրա առելքարական ապարատի բարվոքում ու եժանա-
ցումը:

Մրա հետ միասին անհրաժեշտ և գերաբննել գյուղություն
ունեցող սինդիկատային միությունները և թողնել միմիայն նը-
րանց, վորոնց գոյության անտեսական նպատակահարմարու-
թյունն ապացուցված կը լինի: Միայն խստորեն կիրառելով
մասսայական գործածության առարկաների արտադրության ըն-
դարձակման քաղաքականությունը, պետական արդյունագոր-
ծությունը հնարավորություն կստանա հաջողությամբ մրցելու
մասնավոր կապիտալի հետ մասսայական սպառող՝ գյուղացուն
և բանվորին մատակարարելու գործում:

Այն կերպ աշխատելով, վոր պետական ապահանգրած
արդյունաբերությունը ծառայի լայն մասսայական սպառողին,
կուսակցությունը միաժամանակ շարունակում է մնալ տին տե-

ամերի վրա, թե անհրաժեշտ և վորոշ չափով աջակցել մանը
արդյունաբերությանը, վորը վոչ խոշոր ծախսեր և պահանջում
իր վերականգնման համար, վոչ հում նյութերի, վառելիքի
և պարենի հատուկ պաշարներ և վորը կարող և վորոշ ոգնու-
թյուն ցույց տալ գյուղացիական տնտեսության և բարձրացնել
նրա արտադրական ույժերը՝ այդ միջոցով մեծացնելով յերկրի
ընդհանուր ապրանքաշրջանառությունը:

Տնայնագործական արդյունաբերության վերաբերմամբ,
կուսակցությունն անհրաժեշտ և համարում աջակցել արհեստակ-
ցական կոռպերացիայի զարգացմանը՝ մասնավոր կապիտալի աճ-
մանը հակազեղու (տնայնագործական արդյունաբերության հի-
ման վրա) և պետական արդյունագործության և տնայնագոր-
ծական արդյունաբերության միջև անհրաժեշտ կապի սահման-
ման նպատակով:

Մեր արդյունագործության կազմակերպության բարվոքման
գործի մեջ, վորպես անխուսափելի տարր, մանում և արդյունա-
բերության կենտրոնացումը: Մենք հին տնտեսական ոեմիմից,
վորպես ժառանգություն, ստացել են մեծ քանակությամբ ձեռ-
նարկներ, վորոնք առաջացել են առանց վորեվ և համապատաս-
խանության ընդհանուր տնտեսական պլանի և ժողովրդատըն-
տեսական կյանքի այն կառուցվածքի հետ, վորը ունենք մենք
ներկայիս: Այդ ձեռնարկները, վորպես ծանր ընեւ, ժողովրդա-
տնտեսական բյուջեյի վրա յեն ընկած: Նրանց պահելու ծախ-
սերն ամեն գեղքում ել մանում են մթերքների գների մեջ և
արձրացնում են նրանց: Բայց կուսակցությունը չի կարող մո-
ռուանալ և վոչ մի բոպե, վոր այստեղ ավելի քան վորեւ և այլ
բնագավառում, առելքարական և բյուջետային նկատառությունները
պետք է կոնտրոլի յենթարկվեն քաղաքական նկատություններով,
այսինքն տվյալ պայմաններում՝ բանվոր դասակարգի քաղաքա-
կան նղորության պահպանման նկատառություններով: Այնտեղ, վոր-
տեղ գործարանների փակումը կը նշանակեր հարված պրոլետա-
րիատի քաղաքական ույժին, կը քայլայեր նրա հիմնական կադ-
րերը և նրանց ցրվելու պատճառ կը դառնար—այդպիսի տեղե-
րում ուժիղ կենտրոնացման կիրառումը՝ անթույլատրելի քաղա-
քական սխալ կը լիներ:

Նախընթաց ժամանակաշրջանում կուսակությունը իր
ուժիքը կենտրոնացրեց ածուխի (Դոնի ավագան) և նավթի (Բա-
գու) արտադրության ամբազնդման և ընդլայնման վրա, վո-
